# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 4 | Դեկտեմբեր | 2018 թ. | Բ | 9285991482 |

| [4] Մատուցման ամսաթիվը | | |
|---|---|---|
| 4 | Դեկտեմբեր | 2018 թ. |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 1 4 3 8 4 6 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՊՈԼԻԳԼՈՏՆԵՐ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | «Արդշինբանկ» ՓԲԸ — N 2474703016610000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿԻԵՅԱՆ Փ. 11 83 տ. |
| [13] Լրացուցիչ տվյալներ | Ծառայությունների մատուցման վայրը ( հասցեն ) ՀՀ ք. Երևան, Կիևյան փ. 11 83տ. |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Միջին բարդության թիվ 69103609/1 քրեական գործի թարգմանություն, հայերեն- ռուսերեն | էջ | 404 | 2300 | | 929200 |
| 2 | Միջին բարդության թիվ 13102905/1 քրեական գործի թարգմանություն, հայերեն- ռուսերեն | էջ | 381 | 2300 | | 876300 |
| Ընդամենը | | | | | | 1805500 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ OHANYAN INNA 5401570325
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

04/12/2018 10:50:40

**Տեղեկանք**

Թիվ 69103609/1 քրեական գործով որպես "Պոլիգլոտներ" ՍՊԸ թարգմանիչ ներգրավված Ռաիսա Հովհաննիսյանը կատարել է 728.002 նիշ ռուսերեն լեզվի գրավոր թարգմանության աշխատանքներ:

ՀԿԳ քննության ԳՎ մարդու դեմ ուղղված հանցագործությունների

քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Մնոյան

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

29.10.2018թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, Գ.Մնոյանս քննարկելով վարույթում գտնվող, վարույթը կասեցված թիվ 69103609/1 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Մարտուն Սերյոժայի Փիլիպոսյանը 2008թ. հոկտեմբեր ամսին 25.500 ԱՄՆ դոլարով, ապառիկ կարգով «Սեծոնցիոնատորոլ» ՍՊ ընկերության հիմնադիր սեփականատեր Մարգլետ Հարությունյանին է վաճառել «Կամազ» մակնիշի 14 ՍՏ 768 համարանիշի ավտոմեքենան, որից հետո մինչև 2008թ. դեկտեմբերի 24-ը նշված ՍՊ ընկերության տնօրեն Ալբերտ Կալենի Քեղինյանը և Մարգլետ Հարությունյանը մաս-մաս Մարտուն Փիլիպոսյանին վճարել են ընդհանուր առմամբ 21.200 ԱՄՆ դոլար գումար, խոստանալով մնացած 4.300 ԱՄՆ դոլար գումարը վճարել մինչև 2009թ. մայիսի 4-ը, սակայն նշված ժամանակահատվածում չեն կարողացել կատարել խոստումը: 2009թ. մայիսի 04-ին, Մարտուն Փիլիպոսյանը նախնական համաձայնության գալով իր ազգական որդիներ Ավետիք և Սարգիս Վաչեի Հարությունյանների և գործով չպարզված անձանց հետ, ժամը 21-ի սահմաններում, Երևան քաղաքի Զարբախ թաղամասի Արարատյան փողոցի թիվ 87/1 հասցեում գտնվող, վերը նշված ՍՊ ընկերությանը պատկանող տարածքում Ալբերտ Քեղինյանի առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ ոտքերով և ձեռքերով նրա գլխին և մարմնի տարբեր մասերին հարվածներ հասցնելով և առողջությանը դիտավորությամբ թեթև մարմնական վնաս պատճառելով Սարգիս Հարությունյանի կողմից վարվող «Նիվա» մակնիշի, 05 LO 999 համարանիշի ավտոմեքենայով հիշյալ տարածքից բացահայտ առևանգել են Ալբերտ Քեղինյանին և տեղափոխել ՀՀ Արմավիրի մարզի Շահումյան գյուղի մոտակայքում գտնվող «Քելոն» ռեստորան ու պահել այնտեղ՝ ընկերության հիմնադիր-սեփականատեր Մարգլետ Հարությունյանից, Ալբերտ Քեղինյանի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, վերջինիս ազատ արձակելու դիմաց, ինքնիրավչությամբ պահանջելով հետ վերադարձնել նշված ավտոմեքենան կամ վճարել պարտք մնացած գումարը: Ժամեր անց՝ 2009թ. մայիսի 05-ին ժամը 02.30-ի սահմաններում, նշված ավտոմեքենան վերադարձվել է Մարտուն Փիլիպոսյանին, որից հետո Ալբերտ Քեղինյանն ազատ արձակվել:

Դեպքերի առթիվ 07.05.2009թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 322-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 69103609 քրեական գործը:

14.07.2009թ. Մարտուն Փիլիպոսյանը և Սարգիս Հարությունյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 322-րդ հոդվածի 2-րդ մասով, վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Պարզվել է, որ Ավետիք Հարությունյանը հանցագործությունը կատարելուց հետո դիմել է փախուստի՝ 08.05.2009թ. «Զվարթնոց» օդանավակայանով մեկնելով ՌԴ՝ քաղաք Մոսկվա և ՀՀ վերադառնալու վերաբերյալ որևէ տվյալներ ձեռք չեն բերվել:

10.07.2009թ. Ավետիք Վաչեի Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 322-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

27.07.2009թ թիվ 69103609 քրեական գործից Ավետիք Վաչեի Հարությունյանի վերաբերյալ մասը անջատվել և առանձնացվել է առանձին վարույթում, անջատված մասին շնորհվել է 69103609/1 համարը:

31.07.2009թ. 69103609 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

27.08.2009թ. թիվ 69103609/1 քրեական գործով վարույթը կասեցվել է հետախուզվող մեղադրյալ Ավետիք Հարությունյանի գտնվելու վայրը հայտնի չլինելու վերջինս կողմից քննությունից թաքնվելու հիմքով:

2017թ. օգոստոսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է 21.08.2017թ. № 12-185-17 գրությունը, որի համաձայն թիվ 69103609/1 քրեական գործը ՌԴ գլխավոր դատախազություն ուղարկելու նպատակով պահանջվել է քրեական գործը, ըստ մեղադրանքի Ավետիք Վաչեի Հարությունյանի ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդված 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 322-րդ հոդվածի 2-րդ մասով, թարգմանել ռուսերեն լեզվով և ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն:

Նկատի ունենալով, որ թիվ 69103609/1 քրեական գործի նյութերը անհրաժեշտ է թարգմանել ռուսերեն լեզվով, ուստի նշված թարգմանությունը կատարելու համար անհրաժեշտ է ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Ռաիսա Հովհաննիսյանին, ով քրեական գործով չշահագրգռված անձ է և ազատորեն տիրապետում քրեական դատավարության լեզվին և ռուսերեն լեզվին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Ռաիսա Հովհաննիսյանին (ծնված 27.10.1987թ., նույնականացման քարտ համար՝ 004193702) ով քրեական գործով չշահագրգռված անձ է և ազատորեն տիրապետում քրեական դատավարության լեզվին և ռուսերեն լեզվին:
2. Թարգմանիչ Ռաիսա Հովհաննիսյանին պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀԿԳ ավագ քննիչ Գ.Մնոյան

Սույն որոշումն ինձ հայտարարվել է «    » հոկտեմբերի 2018թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ Ռ.Հովհաննիսյան



# ՏԵՂԵԿԱՆՔ 12/17

ՌԱԻՍԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ (004193702, տրված՝ 04.03.2015թ., 001-ի կողմից) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 2-ի «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու մասին» թիվ 193 որոշման պահանջների համաձայն մասնակցել է ՌՈՒՍԵՐԵՆ լեզվի նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգմանը և ստացել է դրական միավոր:

Տեղեկանքը տրված է 10.11.2017թ.:

Ծանուցում.

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նոտարական գործողությունների ժամանակ որպես թարգմանիչ կարող է հանդես գալ համապատասխան լեզվի տիրապետման մասին որակավորման վկայական ունեցող այն անձը, որին վստահում է նոտարը»:

Նոտարական գործողություններին
մասնակցող թարգմանչի որակավորման
ստուգման հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Արթուր Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA ID CARD

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
HOVHANNISYAN



ՌԱԻՍԱ
RAISA

ԱՐԳԱՄԻ

Sex
Ի/F

Citizenship
ՀՀ/ARM

Date of birth
27.10.1987

004193702

04.03.2025

**Տեղեկանք**

Թիվ 13102905/1 քրեական գործով որպես "Պոլիգլոտներ" ՍՊԸ թարգմանիչ ներգրավված Անուշ Խանիկյանը կատարել է 684.755 նիշ ռուսերեն լեզվի գրավոր թարգմանության աշխատանքներ:

Կենտրոն և Նորք-Մարաշ ՎՇ ՔԲ ավագ քննիչ Յ.Սարգսյան

<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ</u>

*թարգման ճանաչելու մասին*

<<05>> 11. 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Յու.Կ.Սարգսյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 13102905/1 քրեական գործի նյութերը.

<u>Պ Ա Ր Զ Ե Ց Ի</u>

Երեք անհայտ անձանց կողմից 2005թ.-ի հունվարի 28-ին ապօրինի ձեռք բերված ատրճանակների գործադրմամբ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 21 հասցեում գործող <<Ոսկե Ուռենի>> խանութից ավազակային հարձակմամբ բազմաթիվ ոսկյա, ադամանդյա և արծաթյա զարդեր հափշտակելու փաստի առթիվ նույն օրը ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 235 հոդվածի 2-րդ մասով Կենտրոնի քննչական բաժնում հարուցվել է թիվ 13102905 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ հանցագործությունը կատարել են Սպարտակ Գառնիկի Առաքելյանը, Արթուր Գեորգիի Կալաբեգաշվիլին և գործով ինքնությունը չպարզված անձը:

07.02.2005թ.-ին որոշումներ են կայացվել Ս.Առաքելյանին և Ա. Կալաբեգաշվիլուն ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 235 հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Նախաքննության ընթացքում Ս.Առաքելյանի մասով թիվ 13102905 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ մեղադրյալ Ա.Կալաբեգաշվիլու և հանցագործությանը մասնակցած, գործով ինքնությունը դեռևս չպարզված անձի մասին առանձնացվել է առանձին վարույթում, որին շնորհվել է թիվ 13102905/1 համարը:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել թիվ 13102905/1 քրեական գործը հայերենից թարգմանել ռուսերեն, ուստի անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել <<Պոլիգլոտներ>> ՍՊԸ-ի աշխատակից թարգմանիչ Անուշ Խանիկյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածներով:

<u>Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝</u>

1. Վարույթումս գտնվող թիվ 13102905/1 քրեական գործով թարգմանիչ ճանաչել << Պոլիգլոտներ >> ՍՊԸ-ի աշխատակից թարգմանիչ Անուշ Խանիկյանին

ծնվ. 04.10.1973թ. ՀՀ, բնակվող ք.Երևան, Նորաշեն 14 շ., 29 բն., հեռ. 091 56 26 95։

2. Անուշ Խանիկյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ո պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին։

Ավագ քննիչ՝ Յու. Սարգսյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ո պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին։

Թարգմանիչ՝ Ա. Խանիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ
ԽԱՆԻԿՅԱՆ

ՍԵՌԸ
Ի

ԱՆՈՒՆԸ
ԱՆՈՒՇ ՍՈՒՐԵՆԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է
04.10.1973

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է
11.04.2017

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
11.04.2027

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
012

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ /SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT



TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT No.
AR0262763

SURNAME(S)
KHANIKYAN

NAME
ANUSH

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
04 OCT 1973

PERSONAL No

SEX
F

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
11 APR 2017

DATE OF EXPIRY
11 APR 2027

AUTHORITY
012

P<ARMKHANIKYAN<<ANUSH<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<
AR02627635ARM7310043F2704117<<<<<<<<<<<<<<00

4

ԱՅՍ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN COUNTRIES UNTIL

14.04.2019

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS 5

Հաշվառված է ք. Երևան 012
[illegible] փող. դ 14 բն 29
« 31 » 01 201 3 թ.

AR 0262782



# ՏԵՂԵԿԱՆՔ

Քաղ. *ԱՆՈՒՇ ԽԱՆԻԿՅԱՆԸ ռուսերեն լեզվից* թարգմանչի որակավորում է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 2-ի «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու մասին» թիվ 193 որոշման պահանջների համաձայն:

Տեղեկանքը տրված է 06.07.2010թ., սնժամկետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ